

5 – 6-րդ դասարաններ (տևողությունը 150 րոպե)

1. Հաշվել արտահայտության արժեքը $51 - 4(22 - 3(15 - 3 \cdot 4))$:

- 1) -1 2) -5 3) 5 4) այլ արժեք

2. $9A : 1A = A$ արտահայտության մեջ A -ի փոխարեն ի՞նչ թվանշան է պետք դնել, որպեսզի ստացվի ճիշտ հավասարություն:

- 1) 5 2) 6 3) 8 4) 4

3. Չորս հաջորդական բնական թվերի արտադրյալը հավասար է 1680: Գտնել այդ թվերի գումարը:

- 1) 22 2) 25 3) 26 4) այլ պատասխան

4. 2մ 40սմ երկարությամբ ձողից պատրաստեցին ուղղանկյուն, որի երկարությունը երկու անգամ մեծ է լայնությունից: Որքա՞ն է այդ ուղղանկյան երկարությունը:

- 1) 80սմ 2) 1մ 20սմ 3) 40սմ 4) 6դմ

5. Ժամը քանիսը՞ կլինի հունվարի 25-ի կեսօրից 427 ժամ հետո:

- 1) կեսգիշեր 2) առավոտյան 7 3) կեսօր 4) երեկոյան 7

6. Երկու երկնիշ թվերի գումարը հավասար է 168: Գտնել այդ երկու թվերից փոքրի ընդունած ամենափոքր հնարավոր արժեքը:

- 1) 99 2) 1 3) 17 4) 69

7. Մարտի 8-ի կապակցությամբ դասարանի 19 տղաներից յուրաքանչյուրը բացիկ նվիրեց 11 աղջիկներից որևէ 3-ին: Քանի՞ բացիկ նվեր տրվեց այդ օրը:

- 1) 57 2) 33 3) 30 4) 209

8. 201-ից մինչև 900 թիվը գրելուց քանի՞ անգամ է օգտագործվում 8 թվանշանը:

- 1) 160 2) 240 3) 280 4) 260

9. Ո՞րն է 6-ի բաժանվող ամենամեծ վեցանիշ թիվը, որի գրառման մեջ հանդիպում են 3,4,7,9 թվանշաններից բոլորը և չեն մասնակցում այլ թվանշաններ:

- 1) 999774 2) 937944 3) 977934 4) այլ թիվ

5 – 6-րդ դասարաններ (տևողությունը 150 րոպե)

10. Շունը, 1 կմ 200մ հեռավորության վրա տեսնելով նապաստակին, սկսեց հետապնդել նրան: Գտնել, թե որքա՞ն ժամանակ անց շունը կհասնի նապաստակին, եթե հայտնի է, որ շունը մեկ վայրկյանում անցնում է 10մ ճանապարհ, իսկ նապաստակը՝ 6մ:

- 1) 15րոպե 2) 7րոպե 30վայրկյան 3) 9րոպե 24 վայրկյան 4) 5 րոպե

11. Վեց երեխա միմյանց հանդիպեցին, և բոլորը միմյանց ողջունեցին ձեռքսեղմումով: Արդյունքում քանի՞ ձեռքսեղմում եղավ:

- 1) 30 2) 36 3) 15 4) 18

12. Թիվը 4-ի և 16-ի բաժանելիս ստացված մնացորդների գումարը հավասար է 16-ի: Քանի՞ մնացորդ կտա այդ թիվը 8-ի բաժանելիս:

- 1) 2 2) 7 3) 6 4) հնարավոր չէ ասել

13. Գտնել $122 \cdot 6 \cdot 56 \cdot 456 \cdot 3456 \cdot 23456 \cdot 123456 + 93 \cdot 67 \cdot 23 \cdot 85 - 36 \cdot 63$ թվի վերջին թվանշանը:

- 1) 1 2) 7 3) 8 4) 9

14. Արշավորդը Երևանից քայլելով մեկնեց Դելի՝ օրական անցնելով 40կմ ճանապարհ: Երկու օր անց Երևանից նույն ուղղությամբ ուղևորվեց նրա ընկերը՝ օրական կտրելով 46կմ ճանապարհ: Պարզել, թե առաջինի ճանապարհ ընկնելուց հետո որերո՞րդ օրվա ընթացքում ընկերները կհանդիպեն:

- 1) 13 2) 14 3) 15 4) 16

15. 2014 հատ բնական թվերի գումարը հավասար է 2015-ի: Որքա՞ն է այդ թվերի արտադրյալը:

- 1) 1 2) 2 3) 4 4) հնարավոր չէ միարժեքորեն ասել

16. A քաղաքից B քաղաք տանում է 4 ճանապարհ, իսկ B քաղաքից դեպի C քաղաք 5՝ ճանապարհ: Քանի՞ հնարավոր երթուղի կա A-ից C քաղաք հասնելու, անցնելով B քաղաքի միջով:

17. Դասարանի աշակերտները կանգնած էին շարքով, ամեն շարքում երկու աշակերտ: Աշակերտներից մեկն իր առջև հաշվեց 7 շարք, իսկ շրջվելով իր հետևում հաշվեց 4 շարք: Քանի՞ աշակերտ կա դասարանում:

18. Քանի՞ հատ եռանիշ կենտ թիվ կա:

19. Քանի՞ հատ երկնիշ թիվ կա, որոնց երկրորդ թվանշանը մեծ է առաջինից:

20. Մարթան ու Արամը միասին ունեն 15 խնձոր, Արամն ու Աննան միասին ունեն 18 խնձոր, իսկ Աննան ու Մարթան՝ 13: Քանի՞ խնձոր ունեն երեքը միասին: